

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16/5**

**17 սեպտեմբերի 2014 թ.**

Քննարկվեց «Կառույց» ՍՊԸ 22.08.2014 թ-ի դիմումով բերված միջնորդությունը 2014 թվականի փետրվարի 9-ից ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

#### **«Կառույց» ՍՊԸ դիմումում բերված փաստարկները.**

«Կառույց» ՍՊԸ-ն հաշվառված է Գավառի ՏՀՏ-ում: Ընկերության կողմից 10.03.2014 թ-ին էլեկտրոնային եղանակով ներկայացվել է «Հայտարարություն ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ», որտեղ ԱԱՀ վճարող համարվելու ամսաթիվը սխալմամբ 09.02.2014 թ-ի փոխարեն նշվել է 31.12.2014 թ-ից մինչև օրացուցային տարվա ավարտը: Նույն օրը՝ 10.03.2014 թ-ին, Ընկերության կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվել է նաև «Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարությունը», որի համաձայն ընկերությունը 09.02.2014 թ-ից մինչև 31.12.2014 թ-ը հանդիսանում է ԱԱՀ վճարող և կարող է կիրառել ԱԱՀ վճարողի հաշվառման համար: Ընկերությունը առ 18.08.2014 թ-ի դրությամբ իր հաշվառումն ամբողջությամբ վարել է ԱԱՀ-ի դաշտում, ներկայացրել է 2014 թ-ի 1-ին և 2-րդ եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկներ, դուրս է գրել և ստացել է հարկային հաշիվներ:

Գավառի ՏՀՏ-ից ընկերությանը տեղեկացրել են, որ թույլ տրված մեխանիկական սխալի արդյունքում ընկերությունը չի կարող համարվել ԱԱՀ վճարող:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է քննարկել ներկայացված փաստարկները և «Կառույց» ՍՊԸ-ին 09.02.2014 թ-ից համարել որպես ԱԱՀ վճարող:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ռառամնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ «Կառույց» ՍՊԸ-ն, ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով, 10.03.2014 թ-ին էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացրել ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Սակայն, հայտարարությունում թյուրիմացաբար ԱԱՀ վճարող համարվելու ժամկետի սկիզբը 09.02.2014 թ-ի փոխարեն նշվել է 31.12.2014 թ-ը: Ընդ որում հարկ է նշել, որ 10.03.2014 թ-ին «Կառույց» ՍՊԸ կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվել է նաև որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարությունը, որում ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու ժամկետի սկիզբը նշվել է ճիշտ՝ 09.02.2014 թ-ը:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում ԱԱՀ վճարող համարվելու ժամկետը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, ըստ էության, կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Կառույց» ՍՊԸ 22.08.2014 թ-ի դիմումով բերված միջնորդությունը 2014 թվականի փետրվարի 9-ից ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ, ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

## **ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝**

«Կառույց» ՍՊԸ-ին 2014 թվականի փետրվարի 9-ից համարել ավելացված արժեքի հարկ վճարող:

**Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝**

  
**Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ**  
